անսամբլների կազմակերպման անսահման լայն և չափազանց բազմազան հնարավորություններ են թաքնված:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պատասխանատու դեր է խաղում ամեն մի հասարակության կյանքի և զարգացման մեջ: Այդ դերը բնորոշվում է ճարտարապետության հոգևոր և նյութական էությամբ: Նյութական կողմը այն անհրաժեշտ տարրերից մեկն է, որի բազայի վրա զարգանում է հասարակական կյանքը: Իսկ գեղարվեստական կողմը, որպես հոգևոր կուլտուրայի և արվեստի երևույթ, ճարտարապետությունը մերձեցնում է գաղափարական արվեստներին, որոնք իրենց ստեղծագործություններում մարմնավորում են հասարակական գիտակցությունը: Այդ պատճառով էլ ճարտարապետությունը արտացոլելով հասարակարգը ամբողջովին վերցրած, մեր հասարակության պայմաններում ինքը նյութապես և գաղափարապես ազդում է կենցաղի վերակառուցման, մարդկանց էսթետիկական ճաշակի զարգացման վրա:

Սովետական ճարտարապետությունն այժմ գտնվում է իր զարգացման կարևոր փուլերից մեկում: Իսկ ճարտարապետների առջև մեծ ու պատասխանատու խնդիր է դրված՝ մեծ դարաշրջանին արժանի քաղաքներ ստեղծելու համար: Մեր ճարտարապետության այսօրը նայում է դեպի վաղը՝ դեպի կոմունիզմ:

## ՍՈՎՈՐՈՒՄ ԵՆ... ՔՆԱԾ

Կեսօրյա հանգստի ժամն է: Ընդարձակ ննջասենյակում 13—15 տարեկան 20 աշակերտներ խաղաղ քնած են: Մահճակալների արանքով քայլում է ուսուցիչը: Տղաները, իրոք, քնած են, բայց նրանք միաժամանակ... դաս են սերտում. լուծում են առաջարկված թվաբանական խնդիրներ, կամ բերանացի սովորում հարկավոր պոեմը:

Այսպես են փորձում ուսուցանել Բերգամի Սեն-Վենսեն կոլեջում:

Աշխարհում առաջին անգամ կեսօրյա հանգիստը անց է կացվում... դասերի ընթացքում: Հիպնոզի ուժով քնած երեխաները շատ ավելի արագ են կատարում առաջադրանքները, քան, երբ նրանք արթուն պառկեն: Բավական է մեկ անգամ նրանց համար կարդալ պոեմը, որպեսզի ամբողջ երկու տարի այն չմոռացվի:

Ավելի զարմանալի մի բան էլ կա. երբ ուսուցիչը դասի ընթացքում այլ բան է սովորեցնում, ապա արթնանալուն պես երեխաներն այն անմիջապես դուրս են նետում իրենց հիշողությունից, ինչպես ավտոմատը՝ կեղծ կոպեկը:

Այդ արտասովոր նախաձեռնության հեղինակը՝ դոկտոր Մարիո Բելլինին, հիպնոզողի իր ընդունակությունը չի օգտագործում երեխաներին քնեցնելու համար: Նա օգտագործում է միայն ձայնապնակներ, որոնք հնարավորության սահմաններում թույլ են տալիս այդ մեթոդը կիրառելու նաև այլ դպրոցներում:

Բելլինիի վկայությամբ, տղաների ուշադրությունը չեն գրավում ոչ բզզացող ճանճերը, ոչ զանազան հետաքրքրություններով լի փողոցի աղմուկը: Նրանց ուշադրությունը կենտրոնանում է միայն առաջադրանքի վրա:

Այս մեթոդով սովորող քսան համեմատաբար ետ մնացող աշակերտներ մի քանի ամսվա ընթացքում հասել են իրենց՝ առավել ընդունակ ընկերների մակարդակին:

Չնայած ակներև է ուսուցման արդյունքը, բայց Մարիո Բելլինիի մեթոդը շատերը քննադատում են:

— Չէ որ,— ասում են նրանք,— նման ուսուցման դեպքում երեխաները գտնվում են պասսիվ վիճակում և չեն կարող ակտիվ մասնակցություն ունենալ գիտելիքների ձեռք բերման գործում, որը անհրաժեշտ նախապայման է այդ գիտելիքները կյանքում օգտագործելու համար: Այս ձևով լավագույն դեպքում երեխաներին կարելի է դարձնել հրաշալի կենդանի բառարաններ, մինչդեռ իսկական մանկավարժությունը նրանց մեջ բազմազան հետաքրքրություններ է արթնացնում:



digitised by A.R.A.R.@